

ՎԱՐՁՐ



ՀԱՅԿԱԿԱՆ ԵՄՍԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ԳԻՄՆԱԴՐԱՄ
RESEARCH ON ARMENIAN ARCHITECTURE

DUTY OF SOUL

№ 3 ԴԵԿՏԵՄԲԵՐ - 2010 - ԱՊՐԷԼ - 2011
N 3 DECEMBER - 2010 - APRIL - 2011

ՀԱՅԿԱԿԱՆ
ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ԿԻՃԱԿԸ
ԱՂՐԲԵՓԱՆՈՒՄ

THE CONDITION
OF ARMENIAN MONUMENTS
IN AZERBAIJAN



ՎԱՐՉՔ

RESEARCH ON ARMENIAN ARCHITECTURE FOUNDATION
DUTY OF SOUL

№ 3 ԴԵԿՏԵՄԲԵՐ - 2010 - ԱՊՐԻԼ - 2011
DECEMBER - 2010 - APRIL - 2011

ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ
ՍԱՄՎԵԼ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Editor-in-chief
SAMVEL KARAPETIAN

ԽՄԲԱԳՐԱԿԱԶՄ
ԷՄՄԱ ԱԲՐԱԿՅԱՆՅԱՆ

ԽՄԲԱԳԻՐ Editor
EMMA ABRAHAMIAN

ՀԱՍՄԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԽՄԲԱԳԻՐ-ԱՐԲԱԳՐԻԳ
Proof-reader (Armenian text)
HASMİK HOVHANNISSIAN

ԳԱՅԱՆԵ ՄՈՎՍԻՍՅԱՆ

ԹԱՐԳՄԱՆԻԳ Translator
GAYANE MOVSISSIAN

ԱՐՄԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՄԱԿԱՐԳՁԱՅԻՆ ՋԵԿԱՎՈՐՈՐ
Designer
ARMEN GEVORGIAN

ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՐՈՒԹՅՈՒՆ ԻՐԱՎԱՍԱԳՆՈՐ
ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՈՒՄՈՒՄՆԱՍԻՐՈՐ ՀԻՄՆԱԴՐԱՄ

RESEARCH ON ARMENIAN
ARCHITECTURE FOUNDATION
Engaged in informational Activity

ՎԿԱՅԱԿԱՆ N 03U089223

ՏՐԿԱԾ 13.10.2010

Certificate No. 03U089223
Given 13.10.2010

ՀԱՄԱՐԻ ԹՈՂԱՐԿԱՄԱՆ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ

ՍԱՄՎԵԼ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Responsible for this issue
SAMVEL KARAPETIAN

ՏՊԱԳՐՎԵԼ Է

«ՏԻԳՐԱՆ ՄԵԾ» ՀՐԱՏԱՐԱԿԳՈՏԱՆԸ

Printed by
TIGRAN METZ Publishing House

ՏՊԱԶԱՆԱԿԸ՝ 1000

Number of copies: 1000

ԵՐԵՎԱՆ, ԲԱԴՐԱՄՅԱՆ 24Գ

Baghramian 24g, Yerevan, RA

<http://www.armenianarchitecture.am>

<http://www.raa.am>, www.raa-am.com

✉ raayer@sci.am

☎ 010 52 15 25

© ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՈՒՄՈՒՄՆԱՍԻՐՈՐ ՀԻՄՆԱԴՐԱՄ

© Research on Armenian Architecture





Հրահարակվում է
 ՀՀ մշակույթի
 նախարարության
 հովանավորությամբ

Published under the
 patronage of the
 Ministry of Culture of the
 Republic of Armenia

ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՐՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ ԱՂԻՔԵԶԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Անհիշելի ժամանակներից հայերով բնակեցված և Մեծ ու Փոքր Հայքերի պետականության սահմանների մեջ ընդգրկված Հայկական լեռնաշխարհը չափազանց հարուստ է երկրամասի բնիկների արարած բազմադարյան տարաբնույթ պատմական հուշարձաններով:

Ներկայիս Հայաստանի Հանրապետությունն իր մեջ ընդգրկում է Հայկական լեռնաշխարհի կամ Պատմական Հայաստանի տարածքի շուրջ 10%-ը (ԼՂՀ-ի հետ՝ մոտ 14%-ը), իսկ լայնածավալ հայրենիքի մնացյալ հատվածը տրոհված է Հայաստանի Հանրապետության հարևան երկրների՝ Թուրքիայի, Ադրբեջանի (ներառյալ վերջինիս ենթակայության ներքո գտնվող Նախիջևանի Ինքնավար Հանրապետությունը), Վրաստանի և Իրանի միջև:

Ի հետևանք այս ամենի՝ հայկական պատմական հուշարձանների մեծագույն մասն էլ ինքնաբերաբար գտնվում է Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս:

Անցած 8-9 տասնամյակների ընթացքում (1920 թ.-ից ի վեր) Հայաստանի հարևան պետությունները հայկական պատմական հուշարձանների պահպանության հարցում դրսևորել են տարբեր մոտեցումներ: Բացառությամբ Իրանի՝ Հայաստանի Հանրապետության մյուս երեք հարևանների տարածքներում հայկական պատմական հուշարձանները ոչ միայն ենթակա չեն եղել պահպանության, այլև ծրագրված և միտումնավոր ոչնչացվել են:

1918 թ. կնքահայր Թուրքիայի դիվանագիտական հաղթանակով, գործում մասնակցությամբ և հոգածությամբ ստեղծված, իսկ 1920 թ. բոլշևիկների կամքով ամրագրված և տարածքի կիսով չափ հայոց բնօրրանի, կիսով չափ էլ հայ մշակույթով ներծծված պատմական Աղվանքի սահմաններում ձևավորված նորելուկ և ինքնահնար Ադրբեջանի Հանրապետության¹ իշխանությունները հենց առաջին տարիներից ի վեր եթե ոչ թշնամական, ապա առնվազն խտրական վերաբերմունք են դրսևորել հայկական պատմական հուշարձանների նկատմամբ:

Բնիկ հայկական պատմական լայնածավալ տարածքների՝ Ադրբեջանի կազմում հայտնվելու հանգամանքով պայմանավորված՝ հանրապե-

THE STATE OF HISTORICAL ARMENIAN MONUMENTS IN THE REPUBLIC OF AZERBAI- JAN

The Armenian Highland, which has been inhabited by Armenians since time immemorial, and which used to be home to the kingdoms of Metz Hayk (*Armenia Maior*) and Pokr Hayk (*Armenia Minor*), abounds in a wide variety of centuries-old historical monuments created by its natives.

The present-day Republic of Armenia covers over 10 % (about 14 % together with the Republic of Nagorno Karabakh) of the vast territory of the Armenian Highland or Historical Armenia, the rest of which is divided among the adjacent countries: Turkey, Azerbaijan (including the Autonomous Republic of Nakhijevan which is within its governance), Georgia and Iran. Due to this, most of historical Armenian monuments are situated outside the borders of the Republic of Armenia.

In recent 8 to 9 decades (since 1920), the aforementioned states neighbouring Armenia have shown different approaches to the issue of the preservation of historical Armenian monuments—with the exception of Iran, the other three of them have not ever taken any steps towards the preservation of historical Armenian monuments; moreover, they have been subjected to premeditated demolition in these countries.

The year 1918 marked the foundation of the Republic of Azerbaijan,¹ which came into being as a result of a diplomatic victory won by, and through the strenuous efforts of, its “godfather,” i.e. Turkey. Half of the newly-established state comprised the territory of Historical Armenia, the rest of it extending within the borders of the historical land of Caucasian Albania boasting an abundance of Armenian cultural monuments. In 1920 the Bolsheviks ratified the existence of this state, the authorities of which showed a biased—if not hostile—attitude towards the historical Armenian monuments which had thus

¹ Ադրբեջանի Հանրապետությունը ծնունդ է առել Հայաստանի Արցախ, Ոսիք մահանգների, Նախիջևանի երկրամասի, իսկ մինչ Արցախյան ազատամարտը նաև Սյունիք մահանգի Քաշաղ, Քաշունիք և Կովսական գավառների՝ Հայաստանից օտարման և Ադրբեջանին բռնակցելու արդյունքում:

¹ The Republic of Azerbaijan came into being as a result of the annexation of the following parts of Historical Armenia: Artsakh and Utik Provinces, the region of Nakhijevan, as well as Kashatagh, Kashunik and Kovsakan Districts, which formed part of Syunik Province prior to the liberation war of Artsakh.

տության տարածքն իրենից ներկայացնում է մշակութային միասնական տարրեր երկու միջավայր:

Առաջին խմբում հազարամյակների ընթացքում երկրամասի բնիկների, ինչպես նաև հայկական քաղաքակրթությունը կրող աղվանական որոշ ցեղերի ստեղծած նյութական մշակույթի՝ 1960-ական թվականներից ի վեր աղվանական հայտարարված հուշարձաններն են, իսկ երկրորդում՝ արաբական արշավանքներից ի վեր, բայց առավելաբար ուշ միջնադարում երկրամաս թափանցած քյուրքական և քրդական գանազան ցեղերից, պարսիկ տիրակալներից և բռնությամբ մահմեդականացած բնիկների մի մասից ժառանգված, 1935 թ.-ից² հետո «աղբրեջանական» պիտակավորված կովկասյան թաթարների՝ անհամեմատ ավելի փոքրաթիվ և տեսակով սահմանափակ հուշարձանները (դրանք գլխավորապես խանական ապարանքներ են, մզկիթներ և գերեզմանական հուշարձաններ՝ դամբարաններ, տապանաքարեր):

Աղբրեջանական իշխանությունների՝ հուշարձանների նշյալ երկու խմբերի ուսումնասիրության և պահպանության խնդիրներին առնչվող վերաբերմունքը հենց սկզբից էլ եղել է ընդգծված խտրական:

Ասվածը փաստենք հետևյալ համեմատությամբ: Երբ 1920-1940-ական թվականներին որոշ Խորհրդային Միությունն ալեկոծվում էր հակակրոնական՝ աթեիստական գաղափարախոսությամբ, Աղբրեջանում չքանդվեց ոչ մի մզկիթ, այլ կառուցվեցին նորերը, մինչդեռ զուգահեռաբար ավերվեցին և իսպառ անհետացան միջնադարյան տասնյակ վանքեր և եկեղեցիներ:

1950-1960-ական թվականներին, երբ խորհրդային տերությունն այլևս հրաժարվել էր պաշտամունքային հուշարձանների դեմ իրականացված հակակրոնական կույր պայքարից, Աղբրեջանում պետական հովանավորությամբ շարունակվում էր քրիստոնեական ծագում ունեցող հայկական միջնադարյան հուշարձանների (վանքեր, եկեղեցիներ, մատուռներ և խաչքարերով գերեզմանոցներ) զանգվածային ջարդարարությունը:

Աղբրեջանի տարածքում հայտնված հայկական հուշարձանների ոչնչացման պետականորեն գործադրվող քաղաքականությունը, ըստ էության

appeared within their rule from the very first years of their coming to power.

Due to this fact, the cultural heritage preserved on the territory of Azerbaijan falls in two different groups: a) ancient monuments of material culture created by the natives of the region and certain Caucasian Albanian tribes which were known as carriers of Armenian civilisation (since the 1960s all these monuments have been declared as Albanian ones); b) monuments erected by different Turkic and Kurdish tribes which penetrated into the region in the times of Arab invasions (but mostly in the late Middle Ages), as well as by some Persian lords, part of the natives forced into Muslimisation, and Caucasian Tatars. These monuments, which show but meagre variety and are incomparably smaller in number (they comprise khans' palaces, mosques and funerary monuments such as mausoleums and tombstones), have been labelled as "Azerbaijanian" since 1935.² From the very foundation of Azerbaijan, the attitude of its authorities towards the study and preservation of the monuments of these two groups was marked with flagrant discrimination. Thus, between the 1920s and 1940s, when the entire USSR was pervaded with anti-religious (i.e. atheistic) ideology, no mosques were pulled down in Azerbaijan—on the contrary, new ones were built, whereas in the mean-time, tens of medieval churches and monasteries were destroyed without any vestiges left.

During the 1950s to 1960s, when the Soviet authorities had already terminated their blind struggle against religious monuments, the mass destruction of medieval Christian Armenian monuments (churches, chapels, convents and cemeteries of cross-stones) still went on in Azerbaijan under state auspices.

In fact, the implementation of the state policy of annihilation against the Armenian monuments located on the territory of Azerbaijan did not cease and was not even abated after the

2 Մինչև 1935 թ. նորաբնի պետության (Աղբրեջան ամունը քաղաքական հեռահար նկատառումներով գողացված է հարևան Իրանի պատմական Ատրպատական նահանգից) անունով «աղբրեջանցիներ» էին կոչվում հանրապետության բոլոր ազգությունների ներկայացուցիչները (ինչպես՝ ԱՄՆ-ի քաղաքացիներին՝ ամերիկացիներ, Ֆրանսիայի քաղաքացիներին՝ ֆրանսիացիներ և այլն), սակայն դրանից հետո «աղբրեջանցի» բառը մասնավորեցվեց և առանձնաշնորհվեց հանրապետության միայն թաթարագի բնակչությանը:

2 Until 1935, all the peoples living in Azerbaijan were called Azerbaijanians after the newly-founded republic (just as all citizens of the USA are called Americans, those of France Frenchmen, etc.), which had taken the designation of the historical Iranian province of Atropatene (nowadays called Azerbaijan, also spelt Aderbijan; the Azerbadegan of medieval writers) out of far-reaching political considerations. Later, however, the word 'Azerbaijanian' started being used only with reference to those inhabitants of the republic who were of Tatar origin.

թյան, ոչ միայն շղաղարեց, այլև նույնիսկ չմեղմացավ անգամ 1960-ական թվականներից հետո, երբ քաղաքական պատվեր կատարող աղբրեջանցի պատմաբաններն ու ճարտարապետները հանկարծ և միահամուռ կերպով աղվանական հռչակեցին (հիմք է ընդունվել Գ դարից ի վեր հայ առաքելադավան, սակայն արդեն Ժ դարից հետո պատմության թատերաբեմը լքած և այլևս որևէ սկզբնաղբյուրով չվկայվող աղվանական ցեղերի գոյությունը) մինչև ԺԹ դարը կառուցված հայկական բոլոր հուշարձանները:

Հարկ է նշել, որ աղվանական պիտակավորված հայկական հուշարձանների աննախադեպ և համատարած ոչնչացման գործընթացը սկիզբ է առել Աղբրեջանի անկախացումից (1991 թ.) ի վեր և առկա տվյալների համաձայն՝ ցարդ շարունակվում է նույն թափով:

Ինչ վերաբերում է Արցախյան ազատամարտի ընթացքում տուժած պատմական հուշարձաններին, ապա այստեղ հատկանշական է, որ ավերվել են ոչ միայն այն հուշարձանները, որոնք թեկուզ մի կարճ ժամանակահատված հայտնվել էին աղբրեջանական զինուժի վերահսկողության ներքո, այլև այնպիսիք, որոնք գտնվում էին ռազմական գործողություններից շատ հեռու:

1994 թ. մայիսից հաստատված զինադադարից հետո և ցարդ հայկական հուշարձաններն ընդհանրապես, իսկ պաշտամունքային և գերեզմանական հուշարձանները մասնավորապես Աղբրեջանում շարունակում են ոչնչացնել արդեն պետական ամենաբարձր մակարդակով՝ անփառունակ այդ գործին մասնակից դարձնելով նույնիսկ երկրի ռազմական ուժերին:

Ամփոփելով հայկական պատմական հուշարձանների նկատմամբ աղբրեջանական իշխանությունների վարած տևական ժխտողական քաղաքականության էությունը՝ դժվար չէ նկատել, որ տեղի ունեցածը նույնական է 1915 թ.-ից ի վեր Արևմտյան Հայաստանում, 1975 թ.-ից հետո Հյուսիսային Կիպրոսում, վերջին տարիներին էլ սերբական Կոսովո մարզում կատարվածների հետ, ուստի հստակ է, որ այլոց հայրենիքներում ստեղծված թյուրքական պետությունների մոտեցումներն ու գործողությունները միօրինակ են և բխում են նվաճած երկրամասերն իբր այդ ձևով յուրացնելու և իրենց սերունդների համար ապահովագրելու մտահոգությունից:

Ի հետևումն վերոշարադրյալի՝ հարկ ենք համարում շեշտել, որ Աղբրեջանի հակամշակույթ քաղաքականությունն արդեն իսկ ոչ միայն ահռելի վնաս է հասցրել երկրի մշակութաստեղծ բնիկ ժողովուրդներին, այլև միևնույն ժամանակ անդառնալի կորուստ է պատճառել համաշխարհային քաղաքակրթությանը:

1960s, when all of a sudden, Azerbaijani historians and architects unanimously declared—indeed, obeying an order they had received from the authorities of the country—that all Armenian monuments built prior to the 19th century are “Albanian” ones. They based their allegation on the former existence of certain Albanian tribes which adhered to the Armenian Apostolic Church from the 4th century onwards, but disappeared from the history of mankind after the 10th century and are not mentioned in any of the subsequent sources.

It should be mentioned that the unprecedented and wide-spread destruction of the Armenian monuments labelled as “Albanian” ones started after Azerbaijan declared independence (1991), and as attested by the available information, nowadays it has not abated at all.

As for the historical Armenian monuments damaged during the liberation war of Artsakh, it is noteworthy that apart from the monuments demolished even where they remained under Azeri control for a short time, there are many others which suffered damage or destruction despite their being situated very far from the zone of military operations.


Since the armistice of May 1994, the destruction of the Armenian monuments (particularly, religious and funerary ones) of Azerbaijan has been ongoing at state level, the armed forces of the country being directly involved in these base atrocities.

It is evident that the policy of annihilation continually exercised against the historical Armenian monuments of Azerbaijan is just another case of the implementation of the same policy in Western Armenia since 1915, Northern Cyprus since 1975, and in the Serb region of Kosovo in recent years. This shows that the authorities of the Turkic states established in the homelands of other peoples are unanimous in their approaches and actions relating to the lands they keep under occupation: their aim is the final appropriation of these territories which can in this way easily pass to their coming generations.

To summarise, we find it expedient to stress that the culture-destroying policy of Azerbaijan has inflicted formidable and irretrievable losses not only on the native peoples living within its borders, but also on world civilisation.


**ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱԴՐԲԵՋԱՆԻՆ ԲՈՆԱԿՑՎԱԾ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ
ՄԻՆՉԵՎ ԱՐՑԱԽՅԱՆ ԱԶԱՏԱՄԱՐՏԸ**

**THE STATE OF HISTORICAL ARMENIAN MONUMENTS IN THE DIS-
TRICTS ANNEXED TO SOVIET AZERBAIJAN PRIOR TO THE LIB-
ERATION WAR OF ARTSAKH**



ԾԱՐ ԳՅՈՒՂ, ՔԱՐՎԱՃԱՌԻ ՇՐՋԱՆ. Տրտու և Ծար գետերի միջև՝ հրվանդանաձև երկարած լեռնաճյուղի ավարտին տեղադրված, մինչև 1950-ական թվականների սկզբները կանգուն, ապա հիմնահատակ քանդված Գետամիջո վանքի (1301 թ.) տեղը և վանքի ճարտարապետական բեկորները որպես շինանյութ գործածված վանքատեղիին կից հիմնված Վանք անունը կրող աղբբեջանաբնակ գյուղի բնակելի շինությունների որմերում (լուս.՝ Սամվել Կարապետյանի, 1993 թ.)

TZAR VILLAGE, KARVAJAR DISTRICT. The site of Getamijo Monastery (1301) once situated at the termination of a mountain branch extending like a cape in the area between the rivers Trtu and Tzar (it was preserved standing until the early 1950s, after which it was levelled to the ground); the fragments of the monastery used as building material for the houses of an Azerbaijanian village founded near its site and named *Vank*, the Armenian equivalent for *Monastery* (photos by Samvel Karapetian, 1993)




ԾԱՐ ԳՅՈՒՂ, ՔԱՐՎԱՃԱՌԻ ՇՐՋԱՆ. Գետամիջո վանքի ավերումից հետո բեկորների մի մասը՝ փոխադրված մերձակա Չրաղ գյուղ և գործածված 1950-ական թթ. կառուցված դպրոցի շինության մեջ (լուս.՝ Սամվել Կարապետյանի, 1993 թ.)
TZAR VILLAGE, KARVAJAR DISTRICT. Part of the fragments of Getamijo Monastery which were moved to the adjacent village of Cheragh and used in the construction of a school house in the 1950s (photos by Samvel Karapetian, 1993)



ԾԱՐ ԳՅՈՒՂ, ՔԱՐՎԱՏՈՒՆԻ ՇՐՋԱՆ. 1950-ական թթ. ոչնչացված գյուղամիջի Մայր և Սբ. Սարգիս եկեղեցիների, նաև խաչքարերով ընդարձակ գերեզմանոցի հարյուրավոր բեկորները որպես շինանյութ օգտագործվել են նույն գյուղի դպրոցի կառուցման ժամանակ (լուս.՝ Սամվել Կարապետյանի, 1993 թ.)

TZAR VILLAGE, KARVAJAR DISTRICT. Hundreds of fragments left after the destruction (1950s) of two churches situated in the village centre (St. Sargis and the Mother Church) together with a countless number of broken pieces from a large cemetery of cross-stones which were used as building material for the school of the same village (photos by Samvel Karapetian, 1993)



ԾԱՐ ԳՅՈՒԴ, ՔԱՐՎԱՏԱՌԻ ՇՐՋԱՆ. 1950-ական թթ. ոչնչացված գյուղամիջի Մայր և Սբ. Սարգիս եկեղեցիների, նաև խաչքարերով ընդարձակ զերեզմանոցի հարյուրավոր բեկորները որպես շինանյութ օգտագործվել են նույն գյուղի դպրոցի կառուցման ժամանակ (լուս.՝ Սամվել Կարապետյանի, 1993 թ.): Հայ մշակույթի ջարդը ներկայացնող աղբրեջանական դպրոցի հատակագիծը

TZAR VILLAGE, KARVAJAR DISTRICT. Hundreds of fragments left after the destruction (1950s) of two churches situated in the village centre (St. Sargis and the Mother Church) together with a countless number of broken pieces from a large cemetery of cross-stones which were used as building material for the school of the same village (photos by Samvel Karapetian, 1993); the plan of the Azerbaijanian school, the very building of which is eloquent proof of the annihilation of Armenian cultural heritage



ՋՈՒԿԱ, ՆԱԽԻՋԵՎԱՍԻ ԻՂ. միջնադարյան ընդարձակ գերեզմանոցի հարյուրավոր խաչքարերը 1970-1980-ական թվականներին մետաղական սեպերի օգնությամբ վերածվում էին խորանարդների և փոխադրվելով այլ վայրեր՝ գործածվում շինարարության մեջ


JUGHA (JULFA), AUTONOMOUS REPUBLIC OF NAKHIJEVAN. Between the 1970s and 1980s, hundreds of cross-stones of the spacious medieval cemetery were broken to pieces with metallic wedges and moved to other places to be used as building material






ԼՍԼԱԶԱՐԻ ԿԱՍՏԻՐԶ, ՔԱՇԱՏԱՂԻ ՇՐՋԱՆ, ԱՐՑԱՍԻ. Սիմեոն Լալազարյանցի միջոցներով 1867 թ. Որոտան գետի վրա կառուցված երկթռիչք կամուրջը և միտումնավոր քերված հայերեն շինարարական արձանագրությունը, խաչը քերված խաչքար Քարվաճառի թանգարանի տարածքում

BRIDGE OF LALAZAR, KASHATAGH DISTRICT, REPUBLIC OF NAGORNO KARABAKH. The double-span bridge built over the river Vorotan in 1867 with Simeon Lalazariants' means; its Armenian-language construction inscription which has been deliberately scraped off; a *khachkar* with an erased cross in the territory of a museum in Karvajar



ՄԵՅՍԱՐԻ ԳՅՈՒՂ, ՇԱՄԱԿԻ ՇՐՋԱՆ. Մեյսարու Սբ. Աստվածածին վանքը (լուս.՝ արտատպված «Տարազ» հանդեսից), վանքի փլատակները 1978 թ. պայթեցումից հետո (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1984 թ.)

MEYSARY VILLAGE, SHAMAKHY DISTRICT. Soubh Astvatzatzin (*Holy Virgin*) Monastery of Meysary (a reprint from the journal "Taraz"); the ruins of the monastery after its explosion in 1978 (photo by Samvel Karapetian, 1984)



ԳԵՏԱԲԱԿ, ՀՅՈՒՄՍԻԱՅԻՆ ԱՐՑԱՆՍ. Սբ. Սարգիս վանքի խաչաձև-գմբեթավոր հորինվածքով եկեղեցին, Թ-ԺԱ դդ., (գծանկարը՝ Լեհման Հաուպտի, լուս.՝ Ս. Կարապետյանի, 1980 թ.)
GETABAK, NORTHERN ARTSAKH. The domed cruciform church of St. Sargis Monastery, 9th to 11th cents. (graphical drawing by Lehmann Haupt, 2nd and 3rd photos by Samvel Karapetian, 1980)



ԳԵՏԱԲԱԿ, ՀՅՈՒՄՍԻԱՅԻՆ ԱՐՑԱԽ. Սբ. Սարգիս վանքի խաչաձև-գմբեթավոր հորինվածքով եկեղեցին 1982 թ. դեկտեմբերին՝ քանդման ընթացքում (լուս.՝ Ս. Կարապետյանի): Ներկայումս իսպառ անհետացված է (հավանաբար քանդումը ավարտին է հասցվել հենց 1980-ական թվականներին)

GETABAK, NORTHERN ARTSAKH. The domed cruciform church of St. Sargis Monastery during its destruction in December 1982 (photos by Samvel Karapetian). At present it is totally annihilated (probably, its destruction was completed in the 1980s).



ԽՐԽԱՓՈՐ ԳՅՈՒՂ, ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ՇՐՋԱՆ (1992 թ.-ից բռնակցված Ադրբեջանին), ԱՐՑԱՆ. «Մանդուր» հնավայրի եկեղեցին, 1252 թ., ճարտարապետ՝ Երեմիա Եղակերցի (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1982, 1984 թթ.)

KHERKHAPOR VILLAGE, SHAHUMIAN DISTRICT, REPUBLIC OF NAGORNO KARABAKH (annexed by Azerbaijan since 1992).
The church of the ancient site of Mandur (architect Yeremia Yeghakertsy), 1252 (photos by Samvel Karapetian, 1982 & 1984)

**ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ
ԱՐՑԱԽՅԱՆ ԱԶԱՏԱՄԱՐՏԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ**

**THE STATE OF HISTORICAL ARMENIAN MONUMENTS DURING
THE LIBERATION WAR OF ARTSAKH**



ՀՈԴԵՐ ԳՅՈՒԴ, ՀԱՂՐՈՒԹԻ ՇՐՋԱՆ. Կավաք վանքի եկեղեցու մուտքը՝ 1742 թ. շինարարական արձանագրությամբ (1982 թ.) և ազատագրումից հետո՝ 2009 թ. (լուս.՝ Ս. Կարապետյանի)

HOGHER VILLAGE, HADRUT DISTRICT. The entrance to the church of Kavak Monastery with its construction inscription (1742) as of 1982 and after its liberation, in 2009 (photos by Samvel Karapetian)



ՀՈՂԵՐ ԳՅՈՒՂ, ՀԱՊՐՈՒԹԻ ՇՐՋԱՆ. Դիզակի մելիքների զինանշանը՝ պատկերված Կավաք վանքի եկեղեցու հարավային ավանդատան բարավորին 1982 թ. և միտումնավոր փշրած ազատագրումից հետո՝ 2009 թ. (լուս.՝ Ս. Կարապետյանի)
HOGHER VILLAGE, HADRUT DISTRICT. The emblem of the *meliks* of Dizak, carved on the tympanum of the southern sacristy of the church of Kavak Monastery, in 1982 and after the liberation of the district, in 2009, as deliberately broken to pieces (photos by Samvel Karapetian)



ԴԱԴԻՎԱՆՔ ԳՅՈՒՂ, ՔԱՐՎԱՃՏՈՒ ՇՐՋԱՆ. 1195 և 1248 թթ. խաչքարերը Սբ. Աստվածածին վանքի հարավարևելյան եկեղեցու մուտքի առջև (լուս.՝ 1987 թ.), որոնք անհետացվել են մինչև շրջանի ազատագրումը (լուս.՝ 1993 թ.)

DADIVANK VILLAGE, KARVAJAR DISTRICT. Cross-stones dated 1195 and 1248 in front of the entrance to the south-eastern church of Sourb Astvatzatzin (*Holy Virgin*) Monastery (photo 1987); the church without the *khachkars* which disappeared before the liberation of Artsakh (photo 1993)




ՂԱԴԻՎԱՆՔ ԳՅՈՒՂ, ՔԱՐՎԱՏՏՈՒ ՇՐՋԱՆ. 1195 և 1248 թթ. խաչքարեր Ար. Աստվածածին վանքի հարավարևելյան եկեղեցու մուտքի առջև (լուս.՝ 1987 թ.)

DADIVANK VILLAGE, KARVAJAR DISTRICT. Cross-stones dated 1195 and 1248 in front of the entrance to the south-eastern church of Sourb Astvatzatzin (*Holy Virgin*) Monastery (photo 1987)



ՄԵՇՇԵՆ ԳՅՈՒՂ (ԲԵՐԴԱԶՈՐ). Պարին Պիժ վանքի գլխավոր եկեղեցին (1668 թ.) և շինարարական արձանագրությունը (լուս.՝ 1989 թ.), եկեղեցու ավերված մուտքը Բերդաձորի ազատագրումից (մայիսի 17, 1992 թ.) հետո (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1994 թ.)
METZSHEN VILLAGE (BERDADZOR). The main church (1668) of Parin Pizh Monastery and its construction inscription (photos 1989); the ruined entrance to the church after the liberation of Berdadzor on 17 May 1992 (photos by Samvel Karapetian, 1994)



ՄԵԾՇԵՆ ԳՅՈՒՂ (ԲԵՐԴԱԶՈՐ). Պարին Պիժ վանքի գլխավոր եկեղեցու (1668 թ.) տեսքը հարավ-արևմուտքից 1989 և 1994 թթ. (լուս.՝ Ս. Կարապետյանի)

METZSHEN VILLAGE (BERDADZOR). The main church (1668) of Parin Pizh Monastery from the south-west in 1989 and 1994 (photos by Samvel Karapetian)



ՄԵԾՇԵՆ ԳՅՈՒՂ (ԲԵՐԴԱԶՈՐ). Պարին Պիժ վանքի Սբ. Հռիփսիմե մատուռի տեսքն արևելքից 1989 և 1994 թթ. (լուս.՝ Ս. Կարապետյանի)

METZSHEN VILLAGE (BERDADZOR). St. Hripsime Chapel of Parin Pizh Monastery from the east in 1989 and 1994 (photos by Samvel Karapetian)



ՄԵԾՇԵՆ ԳՅՈՒԴ (ԲԵՐԴԱԶՈՐ). Պարին Պիժ վանքի Սբ. Հռիփսիմե մատուռի տեսքն արևմուտքից 1989 և 1994 թթ. (լուս.՝ Ս. Կարապետյանի)

METZSHEN VILLAGE (BERDADZOR). St. Hripsime Chapel of Parin Pizh Monastery from the west in 1989 and 1994 (photos by Samvel Karapetian)



ԾԻԾԵՆԱՎԱՆԷ, ՔԱՇԱԹԱԴԻ ՇՐՋԱՆ. վանքի շրջապարսպից բացված դարպասի 1613 թ. շինարարական արձանագրությունը 1985 թ. (լուս.՝ Դ. Ջաքարյանի) և Քաշաթաղի ազատագրումից հետո (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1996 թ.)
TZITZERNAVANK, KASHATAGH DISTRICT. The construction inscription (1613) of the gate opening from the monastic enclosure (photos by H. Zakarian, 1985), and the same gate after the liberation of the district (photo by S. Karapetian, 1996)




ԱՌԱՔԵԼ ԳՅՈՒՂ, ՋԱԴՐՈՒԹԻ ՇՐՋԱՆ. Սբ. Աստվածածին եկեղեցու տեսքը մինչև գյուղի գրավումն ադրբեջանական ելուզակների կողմից (արտատպված **Շ. Մկրտչյանի**՝ Историко-архитектурные памятники Нагорного Карабаха. Ереван, 1988 աշխատությունից) և ազատագրումից հետո (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2009 թ.)

ARAKEL VILLAGE, HADRUT DISTRICT. Sourb Astvatzatzin (*Holy Virgin*) Church before the occupation of the village by Azeri bandits (reprint from: **Mkrtchian, Sh.** The Historical and Architectural Monuments of Nagorno Karabakh. Yerevan, 1988, in Russian) and after its liberation (photo by S. Karapetian, 2009)



ԵՐԻՑ ՄԱՆԿԱՆՑ ՎԱՆՔ, ՄԱՐՏԱԿԵՐՏԻ ՇՐՋԱՆ. վանքի եկեղեցու տեսքը ժէ դարից ի վեր գմբեթին հառնած խաչով 1986 թ. և 1992 թ. ազատագրումից հետո՝ 2004 թ. (լուս.՝ Ս. Կարապետյանի)


YERITS MANKANTS MONASTERY, MARTAKERT DISTRICT. The monastic church (17th century) with its dome surmounted by a cross, and the monument after the liberation (1992) of the district (photos by S. Karapetian, 1986 & 2004)



ՇՈՒՇԻ ՔԱՂԱՔ. Ղազանչեցոց Սր. Ամենափրկիչ եկեղեցու զանգակատան առաջին հարկի տանիքի չորս անկյուններում կանգնած սրնգահար հրեշտակների արձաններից վերջինը, որը տեղում էր մինչև 1989 թ.: Ինչպես պարզվեց քաղաքի ազատագրումից (մայիսի 9, 1992 թ.) հետո, վայր ձգելով փշրել էին (լուս.՝ 1993 թ., Ս. Կարապետյանի): Պահ արձանի վերակերտումից (լուս.՝ Մ. Սարգսյանի)

SHOOSHI CITY. The last of the statues of pipe-playing angels once standing at each of the four corners of the roof of the first floor of the belfry of Ghazanchetsots Sourb Amenaprkich (*Holy Saviour*) Church

The statue was preserved *in situ* until 1989. After the liberation of the city (9 May 1992), it turned out to have been pulled down and broken to pieces by the Azeris (photos by S. Karapetian, 1993); a scene from the re-sculpture of the statue (photo by Manvel Sargissian)






Բերդաձորի Հինշեն, Հաղուրթի Քարագլուխ, Մյուլքուդարա, Խծաբերդ գյուղերում Երկրորդ աշխարհամարտում զոհված հայորդիների հիշատակին կանգնեցված, սակայն 1991-1992 թթ. ադրբեջանական ելուզակների կողմից գյուղերը թեկուզ կարճ ժամանակով գրավելու ընթացքում ավերված կամ գնդակոծությամբ վնասված հուշարձանների (լուս.՝ Ս. Կարապետյանի)

Monuments to the Armenians killed during World War II in Hinshen (Berdadzor), Karaglookh, Myulkudara and Khetzaberd Villages, Hadrut District: destroyed or bombarded by Azeri bandits during the occupation of these places (1991 to 1992) even where it lasted for only a short period (photos by S. Karapetian)

**ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ
ԱՐՑԱԽՅԱՆ ԱԶԱՏԱՄԱՐՏԻՑ ՀԵՏՈ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ
ՆԵՐՔՈ ՄՆԱՑԱԾ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ**

**THE STATE OF HISTORICAL ARMENIAN MONUMENTS IN THE
ARMENIAN DISTRICTS WHICH HAVE BEEN UNDER THE CONTROL
OF AZERBAIJAN SINCE THE LIBERATION WAR OF ARTSAKH**



ԱԼԻԱՊԱՏ ԳՅՈՒՂ, ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԻՂ. գյուղի կենտրոնում գտնվող ժԷ դարում կառուցված Սբ. Աստվածածին եկեղեցու տեսքն արևմուտքից, հարավից, տեղադրությունը ԽՍՀՄ գլխավոր զինվորական շտաբի 1:10.000 մասշտաբի քարտեզի (1976 թ.) վրա և եկեղեցու տեղը ոչնչացումից հետո (տե՛ս Google Earth, 2005 թ.)


ALIPAT VILLAGE, AUTONOMOUS REPUBLIC OF NAKHIJEVAN. Sourb Astvatzatzin (*Holy Virgin*) Church (17th cent.) from the west and south; the monument as marked on the map (1976, scale: 1:10,000) of the Soviet Military Headquarters, and its site after its total destruction (Google Earth, 2005)





ՆԱՍԻՋԵՎԱՆ ՔԱՂԱՔ, ՆԱՍԻՋԵՎԱՆԻ ԻՋ. Սբ. Գևորգ եկեղեցու (1869-1872 թթ.) տեսքը հարավից և հարավ-արևմուտքից, արևմուտքից և հյուսիս-արևմուտքից, տեղադրությունը ԽՍՀՄ գլխավոր զինվորական շտաբի 1:10.000 մասշտաբի քարտեզի վրա և եկեղեցու տեղը ոչնչացումից հետո (տես Google Earth, 2005 թ.)

NAKHIJEVAN CITY, AUTONOMOUS REPUBLIC OF NAKHIJEVAN. St. Gevorg Church (1869 to 1872) from the south, south-west, west and north-west; the sanctuary as marked on the map (1976, scale: 1:10,000) of the Soviet Military Headquarters, and its site after its total destruction (Google Earth, 2005)




ՆԱԽԻՋԵՎԱՆ ԲԱՐԱՔ, ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԻՅ. Սբ. Գևորգ եկեղեցու տեղադրությունը ԽՍՀՄ գլխավոր զինվորական շտաբի 1:10,000 մասշտաբի քարտեզի վրա և անհետացունից հետո (տե՛ս Google Earth, 2008 թ.), եկեղեցու տեղադրությունը ըստ Մ. Սմբատյանցի կազմած քարտեզի

NAKHICHEVAN CITY, AUTONOMOUS REPUBLIC OF NAKHICHEVAN. St. Gevorg Church as marked on the map of the Soviet Military Headquarters (scale: 1:10,000); its site after its destruction (Google Earth, 2008); the monument on the map by M. Smbatians



ԱՐԱԿՈՒՆԻՍ ԳՅՈՒՂ, ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԻՂ. գյուղի արևմտյան եզրին գտնվող 1381 թ. հիմնված և 1648-49 թթ. վերականգնված Սր. Կարապետ վանքը հարավից, հարավ-արևմուտքից մինչև 1990-ական թթ. սկզբները, տեղադրությունը ԽՍՀՄ գլխավոր գիմվորական շտաբի 1:50.000 մասշտաբի քարտեզի (1976 թ.) վրա և վանքի տեղը ոչնչացումից հետո (տես Google Earth, 2011 թ.)
ABRAKUNIS VILLAGE, AUTONOMOUS REPUBLIC OF NAKHIJEVAN. Sourb Karapet (*Holy Precursor*) Monastery (1381), situated at the western extremity of the village (it underwent restoration between 1648 and 1649), as seen from the south and south-west until the early 1990s; the monument as marked on the map (scale: 1:50,000, 1976) of the Soviet Military Headquarters, and its site after its total destruction (Google Earth, 2011)





ԽԱՉԱԿԱՊ ԳՅՈՒՂ, ԳՅՈՒՄԻԱԱՅԻՆ ԱՐՑԱՆ. գյուղից 1 կմ հյուսիս-արևմուտք գտնվող Թարգմանչաց վանքը հյուսիսից, զանգակատունը հյուսիս-արևմուտքից և հարավ-արևմուտքից (լուս.՝ Հ. Ջաբարյանի և Ռ. Արզարյանի, 1980-ական թթ.)

KHACHAKAP VILLAGE, NORTHERN ARTSAKH. Targmanchats (*Translators*) Monastery, situated a km north-west of the village, as seen from the north; its belfry from the north-west and south-west (photos by H. Zakarian & R. Abgarian, 1980s)



ԽԱՉԱԿԱՊ ԳՅՈՒՂ, ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ԱՐՑԱՆ.

Թարգմանչաց վանքի տեսքը տիեզերքից, ձյան վրա վանքի ստվերի արտացոլանքը հուշում է, որ գանգակատունը գոյություն չունի, ուստի ոչնչացված է (տե՛ս Google Earth, 2008)

KHACHAKAP VILLAGE, NORTHERN ART-SAKH. Targmanchats (*Translators'*) Monastery from space: its reflection on snow shows it without its belfry, which suggests that it has been destroyed (Google Earth, 2008)



ԳԱՆՉԱԿ (ԳՅԱՆՋԱ) ՔԱՂԱՔ, ՀՅՈՒՄՍԻՍՏԱՅԻՆ ԱՐՑԱԽ. Կամերային համերգասրահի վերածված Սբ. Հովհաննես եկեղեցու (1633 թ.) տեսքը տիեզերքից (տես Google Earth, 2009), տեսքն արևմուտքից և հարավից (լուս.՝ Ֆրեդերիկ Բերլեմոնի, 2007 թ.) **GANDZAK (GYANJA) CITY, NORTHERN ARTSAKH.** St. Hovhannes Church (1633), now turned into a hall of chamber music, from space (Google Earth, 2009); the monument from the west and south (photos by F. Berlemont, 2007)



ԳԱՆՁԱԿ (ԳՅԱՆՋԱ) ՔԱՂԱՔ, ԴՅՈՒՄԻՍԱՅԻՆ ԱՐՑԱՍԽ. Կամերային համերգասրահի վերածված Սբ. Հովհաննես եկեղեցու՝ շինարարական (1633 թ.), աստապատցի Թասալի նվիրատվական (1643 թ.) և Հովսեփ Գրիգորյանցի ծախսով 1860 թ. պատրաստված դռան միտումնավոր քերված արձանագրությունները (հին լուսանկարները՝ Ս. Կարապետյանի, 1985 թ., նորերը՝ Ֆրեդերիկ Բերլեմոնի, 2007 թ.)

GANDZAK (GYANJA) CITY, NORTHERN ARTSAKH. The inscriptions of St. Hovhannes Church, now turned into a hall of chamber music, which have been deliberately scraped away: one of them (1633) commemorates the construction of the monument, the other a donation (1643) made by a certain Tasal from Astapat, and the third one the making of the church door (1860) with Hovsep Grigoriants's means (photos by S. Karapetian, 1985 & F. Berlemont, 2007)



ԳԱՆԶԱԿ (ԳՅԱՆՋԱ) ՔԱՂԱՔ, ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ԱՐՑԱՍԻ. սվաղով թաքցրած-անհետացրած նվիրատվական արձանագրություններ Սբ. Հովհաննես եկեղեցու հարավային ճակատի արևմտյան կողմում (հին լուսանկարը՝ Ս. Կարապետյանի, 1985 թ., նորը՝ Ֆրեդերիկ Բերլեմոնի, 2007 թ.)

GANDZAK (GYANJA) CITY, NORTHERN ARTSAKH. Donation inscriptions on the western side of the southern facade of St. Hovhannes Church which are hidden under plaster (photos by S. Karapetian, 1985 & F. Berlemont, 2007)



ԳԱՆԶԱԿ (ԳՅԱՆՋԱ) ՔԱՂԱՔ, ՀՅՈՒՄՍԱՅԻՆ ԱՐՑԱԽ. Աբ. Հովհաննես եկեղեցու տանիքի՝ Աղաջան Խաչատրյանի միջոցներով 1862 թ. կատարված նորոգության մասին պատմող հարավային ճակատի արձանագրությունը նույնպես ոչնչացվել է (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1985 թ.): Հայերեն բոլոր արձանագրություններից ձերբագատվելուց հետո համերգասրահի վերածված եկեղեցու ներքին տեսքը (լուս.՝ Ֆ. Բերլեմոնի, 2007 թ.)

GANDZAK (GYANJA) CITY, NORTHERN ARTSAKH. One of the obliterated inscriptions of St. Hovhannes Church, once carved on its southern facade in commemoration of the 1862 repairs of its roof (photo by S. Karapetian, 1985); the interior of the church after its being stripped of all its Armenian inscriptions and turned into a concert hall (photo by F. Berlemont, 2007)






ԳԱՆԶԱԿ (ԳՅԱՆԶԱ) ՔԱՂԱՔ, ՀՅՈՒՄՍԻԱՅԻՆ ԱՐՑԱՆ. Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին և հայկական դպրոցի աշակերտները (լուս.՝ Հ. Բաղայանի և Ս. Կարապետյանի, 1985 թ.)

Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հարավային նախամուտքը 1985 թ. և ոչնչացումից հետո՝ 2007 թ., նույն եկեղեցու գմբեթի խաչը տեղում (1985 թ.) և վայր զցած (2007 թ.), եկեղեցու և հայոց դպրոցի բակը՝ վերածված աղբանոցի (2007 թ.)

GANDZAK (GYANJA) CITY, NORTHERN ARTSAKH. The church of St. Gregory the Enlightener and the pupils of the local Armenian school (photos by H. Badalian & S. Karapetian, 1985)

On the next page: the part preceding the southern entrance to the church of St. Gregory the Enlightener in 1985 and after its destruction, in 2007; the dome cross of the same church *in situ* (1985) and as already overthrown (2007); the yard of the church and the Armenian school as filled with trash (2007)





ԳԱՆԶԱԿ (ԳՅԱՆՋԱ) ՔԱՂԱՔ, ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ԱՐՑԱՆ. Խորհրդային Միության մարշալ Հովհաննես Բաղրամյանի կիսանդրին (հուշարձանի բացումը տեղի է ունեցել 1983 թ.): 1990-ական թթ. կիսանդրու ոչնչացումից հետո նույն պատվանդանին է կանգնեցվել ամբողջ մի կյանք մարդասպանությամբ և կողոպուտով ապրած (զբաղվում էր ճանապարհներին դարանակալելով և հատկապես առևտրականներին սպանելով և թալանելով) ադրբեջանական ժողովրդական «հերոս» Ղաչաղ Նաբիի հուշարձանը

GANDZAK (GYANJA) CITY, NORTHERN ARTSAKH. The bust of Marshal of the Soviet Union Hovhannes Baghramian, the opening of which took place in 1983: after its destruction in the 1990s, its pedestal was surmounted by a monument to “national hero” of Azerbaijan Ghachagh Nabi, a bandit who had spent all his life in murders and plunder (he particularly robbed and killed merchants, waiting in ambush for his victims on roadsides)



ԳՅՈՒԼԻՍՏԱՆ ԳՅՈՒՂ, ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ՇՐՋԱՆ, ԱՐՑԱՍ. Կենտրոնում՝ Սբ Աստվածածին եկեղեցին (լուս.՝ Ա. Ղուլյանի, 1986 թ.), եկեղեցու տեսքը հյուսիս-արևմուտքից և ներսից՝ դեպի արևելք և արևմուտք (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1989 թ.), հրո ճարակ դարձած գյուղի և պայթեցված եկեղեցու տեսքը հարավից (լուս.՝ Կ. Ղահրամանյանի, Արցախի ինքնապաշտպանական ուժերի սահմանային դիրքերից, 2004 թ.)

GYULISTAN VILLAGE, SHAHUMIAN DISTRICT, REPUBLIC OF NAGORNO KARABAKH. Sourb Astvatzatzin (*Holy Virgin*) Church seen in the centre of the photograph (by A. Ghulian, 1986); the monument from the north-west with eastward and westward views of its interior (photos by S. Karapetian, 1989); the burnt village and its blown up church from the south (photo taken by K. Ghahramanian from the border positions of the self-defence forces of Artsakh, 2004)



ՂԱՆԱԿԱ, ԻՍՄԱՅԻԼԻ ՇՐՋԱՆ. Սբ. Աստվածածին եկեղեցու տեսքը հարավ-արևմուտքից, հարավ-արևելքից, հատված թմբուկի ներքին ծավալներից (լուս.՝ Ս. Կարապետյան, 1984 թ.), եկեղեցին պայթեցումից հետո՝ 2003 թ.


GHALAKA, ISMAYILI DISTRICT. Sourb Astvatzatzin (*Holy Virgin*) Church from the south-west and south-east with a partial inner view of its tambour (photos by Samvel Karapetian, 1984); the church after its explosion (photo 2003)



ԲԱՆՇԻԲ (ԿԱՄՈ) ԳՅՈՒՂ. ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ԱՐՑԱՆ. տեսարաններ Ար. Հարություն եկեղեցուց (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1989 թ.)
 և եկեղեցին զրեթե հիմնովին ավերելուց հետո (լուս.՝ Ֆ. Բերլեմոնի, 2007 թ.)

BAKHSHIK (KAMO) VILLAGE, NORTHERN ARTSAKH. Partial views of Sourb Harutiun (*Holy Resurrection*) Church (photos by S. Karapetian, 1989) and the monument after its almost total destruction (photo by F. Berlemont, 2007)






ՍՈՒՆՈՒՔ (ԱԶԱՏ) ԳՅՈՒՂ, ՀՅՈՒՄՍԻԱՅԻՆ ԱՐՑԱՍ. տեսարաններ Ար. Հովհաննես եկեղեցուց (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1989 թ.)
 և եկեղեցին պայթեցումից հետո (լուս.՝ Ֆ. Բերլեմոնի, 2007 թ.)

SULUK (AZAT) VILLAGE, NORTHERN ARTSAKH. Partial views of St. Hovhannes Church (photos by S. Karapetian, 1989) and
 the monument after its explosion (photos by F. Berlemont, 2007)






ԳԵՏԱՇԵՆ ԳՅՈՒՂ, ԳՅՈՒՄԻՍԱՅԻՆ ԱՐՑԱՍ. գյուղամերձ Մրցունիս գյուղատեղիի եկեղեցու տեսքը հարավ-արևմուտքից, ներքին տեսքը դեպի արևմուտք և արևմտյան ճակտոնին ագուցված 1639 թ. կերտված խաչքարը (լուս.: Ս. Կարապետյանի, 1989 թ. և Ֆ. Բերլեմոնի, 2007 թ.)



GETASHEN VILLAGE, NORTHERN ARTSAKH. The church of the adjacent village site of Mertsunis from the south-west; a westward view of its interior and a cross-stone (1639) set in its western pediment as of 1989 and 2007 (photos by S. Karapetian & F. Berlemont)






ԳԵՏԱՇԵՆ ԳՅՈՒՂ, ՀՅՈՒՄՆԱՅԻՆ ԱՐՅԱՆ. Սբ. Աստվածածին եկեղեցուն հարող թաղամասը 1989 և 2007 թթ. (լուս.՝ Ս. Կարապետյանի և Ֆ. Բերլեմոնի), գյուղի առավել աչքի ընկնող բնակելի տներից Մեսրոպ քահանա Տեր-Գրիգորյանցի՝ 1889 թ. կառուցված եռահարկ տունը 1989 և 2007 թթ. (տունը և կից թաղամասն ադրբեջանական ելուզակները հրդեհել են Գետաշենը գրավելու օրերին (1991 թ. մայիս)

GETASHEN VILLAGE, NORTHERN ARTSAKH. The quarter adjoining Sourb Astvatzatzin (*Holy Virgin*) Church in 1989 and 2007 (photos by S. Karapetian & F. Berlemont); Priest Mesrop Ter-Grigoriants's three-floor house (1889), one of the most remarkable buildings in the village, as of 1989 and 2007 (the Azeri bandits burnt the house and the nearby quarter in the days of the occupation of Getashen, in May 1991)




ԲԱՆԱՆՑ ԳՅՈՒՂ, ՀՅՈՒՄՍԻԱՍՅՈՒՆ ԱՐԳՏԱՆ. 1988 թ. ի վեր հայաթափ գյուղի ընդհանուր տեսքը և Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու զանգակատունը՝ Մարտիրոս Չալունյանի պատրաստած և կանգնեցրած խաչով հանդերձ (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1986 թ.), ներկայումս՝ խաչը փոխարինված գյուղին և եկեղեցուն տիրացած երկրի դրոշով
BANANTS VILLAGE, NORTHERN ARTSAKH. A general view of the village which lies stripped of its Armenian inhabitants since 1988; the belfry of St. Gregory the Enlightener’s Church with its cross made and erected by Martiros Chalumian (photo by S. Karapetian, 1986); the church with the cross replaced by the flag of the country which holds the village under annexation



ԳԱԳ, ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ԱՐՑԱՍԽ. Գագ լեռան գագաթին գտնվող Գագա Սբ. Սարգիս վանքի տեսքն արևմուտքից և 1838 թ. իրականացված նորոգության մասին պատմող արձանագրությունը, որն արդեն 1985 թ. միտումնավոր քերված էր (լուս.՝ Ս. Կարապետյանի), իսկ 2000-ական թվականների սկզբներից՝ մեծ մասով նաև ջարդված (լուսանկարները՝ www.bakililar.az/ca/news/news9.html; www.caucasianhistory.org)

GAG, NORTHERN ARTSAKH. The monastery of Gag's St. Sargis, located at the top of Mount Gag, from the west; an inscription commemorating its renovation of 1838; the same inscription as already deliberately scraped away in 1985 (photo by S. Karapetian) and mostly broken in the early 2000s (photos from: www.bakililar.az/ca/news/news9.html; www.caucasianhistory.org)



ԲԱԿՈՒ ՔԱՂԱՔ. Ար. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին 1986 թ. (խաչը գնդեթին) և ներկայումս (խաչն անհետացված):
Հատվածներ Բաքվի հայկական գերեզմանոցից (լուս.՝ 1986 թ.)

BAKU CITY. The church of St. Gregory the Enlightener in 1986 with its dome surmounted by a cross; the monument without the cross; partial views of the Armenian cemetery of the city (photos 1986)



ԲԱՔՈՒ ՔԱՂԱՔ. հայկական գերեզմանոցը ոչնչացման պահին (լուս.՝ սեպտեմբեր, 2007 թ., www.nr2.ru/incidents/139859.html)
BAKU CITY. The Armenian cemetery in process of destruction (photo September 2007, www.nr2.ru/incidents/139859.html)



ՈՍԿԱՆԱՊԱՏ (ՋՈՒՌՆԱԲԱԴ) ԳՅՈՒՂ, ՀՅՈՒՄՍԻԱՍՅՈՒՆ ԱՐԾԱՍՏ. ավերված և տակնուվրա արված գերեզմանոցի տեսքը 2007 թ. (լուս.՝ Ֆ. Բերլեմոնի)
VOSKANAPAT (ZURNABAD) VILLAGE, NORTHERN ARTSAKH. The ruined cemetery of the village where everything is turned upside down (photo by F. Berlemont, 2007)



ՋՈՒՂԱ, ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԻՋ. Ջուղա քաղաքատեղիի հանդեպ՝ Արաքս գետի աջ՝ իրանական ափին է գտնվում երբեմնի քաղաքի հայկական Յովվի եկեղեցին (լուս.՝ Ա. Ջախնազարյանի, 1972 թ.), որն իրանական իշխանությունների նախաձեռնությամբ 2000-ական թթ. նորոգվել էր, ճիշտ է, վերականգնողական որոշ ակնառու սխալներով (լուս.՝ Յրայր Բազեի, 2002 թ.): 2005-2006 թթ. Ջուղայի հայկական աշխարհահռչակ գերեզմանոցն իսպառ ոչնչացնելուց հետո ադրբեջանական ելուզակներն անցել էին Արաքս գետը և ազգությամբ թուրք-ազերի իրանական սահմանապահ ուժերի լուռ թողտվությամբ քանդել նաև Յովվի եկեղեցին: Ավելի ուշ Իրանի կառավարությունը դատապարտել էր իրենց չեզոքությամբ հանցագործությանը սատարած բոլոր զինծառայողներին և ձեռնարկել Յովվի եկեղեցու հերթական նորոգության գործը, որը 2010 թ. դեռևս ընթացքի մեջ էր (լուս.՝ Ս. Կարապետյանի)

JUGHA, AUTONOMOUS REPUBLIC OF NAKHIJEVAN. The Armenian church of Hovvi, once belonging to the city of Jugha and standing opposite its site, on the right (Iranian) bank of the Arax (photo by A. Hakhnazarian, 1972). In the 2000s, the monument was restored—although with certain evident mistakes—on the initiative of the Iranian authorities (photo by Hrayr Baze, 2002). After the total annihilation of the world-renowned Armenian necropolis of Jugha between 2005 and 2006, the Azeri bandits crossed the Arax and destroyed Hovvi Church with the silent connivance of the Iranian frontier guards who were Turkish Azeris by birth. Later the powers of Iran put all the border guards who had supported the criminals with their neutrality on trial and started renovating the church, which was still in this process as of 2010 (photo by S. Karapetian).



ՋՈՒԴԱ, ԱՄՆԻՋԵՎԱՆԻ ԻՅ. Ջուղայի հայկական աշխարհահռչակ գերեզմանոցը 1915 թ. (լուս.՝ Ա. Վրույրի)
JUGHHA, AUTONOMOUS REPUBLIC OF NAKHIJEVAN. The world-famous Armenian cemetery of Jugha in 1915 (photo by A. Vruyr)



ՋՈՒԿԱ, ԱՍՆԻՋԵՎԱՆԻ ԻՋ. Անուշներ Ջուղայի գերեզմանոցի ժե-ժե դարերի խաչքարերից 1915 թ. (լուս.՝ Ա. Վրույրի): Բուլդոզերներով գերեզմանոցի ոչնչացման սկիզբը 1998 թ. (լուս.՝ Ա. Պետրոսյանի)
JUGHA, AUTONOMOUS REPUBLIC OF NAKHIJEVAN. Cross-stones (15th to 17th cents.) from the necropolis of Jugha (photo by A. Vruyr, 1915); the beginning of its destruction with bulldozers (photo by Arpiar Petrossian, 1998)



ՋՈՒՂԱ, ՆԱՍԻՋԵՎԱՆԻ ԻՅ. Ջուղայի գերեզմանոցում տապալված հազարավոր խաչքարերը 2002 թ. (լուս.՝ Դ. Բազեի), գերեզմանոցը տիեզերքից (Google Earth, 2003), ադրբեջանական բանակի ձեռքով գետնատարած խաչքարերը 2005 թ. խճազանգվածի վերածելու ժամանակ (լուս.՝ Ա. Գևորգյանի) և երբեմնի գերեզմանոցի տարածքում տեղակայված հրաձգարանը **JUGHA, AUTONOMOUS REPUBLIC OF NAKHIJEVAN.** Thousands of overthrown cross-stones in the cemetery (photo by H. Baze, 2002); the necropolis from space (Google Earth, 2003); the fallen cross-stones as being crumbled into tiny pieces by the Azeri troops (photo by A. Gevorgian, 2005); the shooting-ground stationed in the site of the cemetery





ՀԱՅԿԱԿԱՆ
ԵՄՐԱՆԱԾԵՏՈՒԹՅՈՒՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ
ՔՐԻՍՏՈՐԻԱՆ
RESEARCH ON
ARMENIAN
ARCHITECTURE
ԵՐԵՎԱՆ - YEREVAN
2011